ԳԼՈՒԽ Ժ.

ԶԱՆԳԵԶՈՒՐ — ԳՈՂԹՆ

Ղարաբաղից յետոյ Զանգեզուրը...

Ղարաբաղից յետոյ Զանգեզուրը...

1919թ. սեպտ. 7-ին, Ազրբէյջանի Գլխաւոր Սպայակոյտի պետը հետեւեալ դաղտնի մտքերն էր թելադրում Ղարաբաղի ընդհանուր-նահանգապետ դր. Սուլթանովին. — «Ղարաբաղի հարցի խաղաղ կարգադրութիւնը հարկադրում է մտածել, որ Զանգեզուրի դաւառի կցումը տեղի կունենայ առանց դինուած կռուի, որովհետեւ նրա հայ ազգաբնակութիւնը, Նախիջեւանի փլուզումից յետոյ, դրուած է երկու կրակի մէջ և հաղիւ թէ համաձայնի դիմադրելու մեզ, առանց թիկունքում նախկին աջակցութիւնն ունենալու: Սակայն և այնպէս, Ղարաբաղի անդորրութեան ապահովումը եղել է ու կը լինի մեր մշտական մտահոգութիւնը՝ Կամաւորական Բանակի և նրա բնական ու մնայուն դաշնակից Հայաստանի հետ ընդհարուելու պարագային: Գործերի ներկայ վիճակում Հայաստանը մեզ համար վտանգաւոր չէ, բայց նման բարենպաստ կացութիւնը չի կարող երկար տեւել, և մենք պէտք է պատրաստուենք աւելի վատ դրութեան համար:

Ղարաբաղի վերջնական կորուստի հետ հայերը չեն կարող հաշտուել և, անկասկած, կաշխատեն օգտագործել ամէն յարմար առիթ կորուստը յետ դարձնելու նպատակով: Այդ բոլորը մեզանից կը պահանջէ, զօրաշարժի դէպքում, զօրքեր թողնել Խանքենդում, իսկ ապագային նաև Գորիսում՝ հայերի վրա հսկելու համար: Այդպիսով, Ղարաբաղը կարող է մեր ոչ մեծ բանակից բաւական դգալի ուժեր գրաւել ճակատից: Սակայն, կան միջոցներ Ղարաբաղի պահպանութեան համար ո՛չ միայն դաշտային զօրքերը չթուլացնելու, այլ ճակատի համար կենդանի ոյժ էլ հանելու նրա խորքերից՝ թողնելով բաւականաչափ զօրամասեր Ղարաբաղի ընդհանուր-նահանգապետութեան շրջանի կարգի ապահովութեան համար:

Այդ նպատակով հարկաւոր է օգտագործել քրդական հիանալի մարտական ոյժը, կազմակերպել նրանցից հետեւակ ու ձիաւոր մասեր «համիդիէ» գնդերի օրինակով, որոնց գործնական օգտակարութիւնը փորձած է թիւրքերի կողմից վերջին պատերազմի ընթացքին: Քրդական գնդերի անվնաս գործունէութեան մասին փոքր-ասիական, պարսկական և Միջագետքի ռազմաճակատներում՝ միաձայն խօսում են պատերազմին բոլոր մասնակցողները:

Քիւրդ զօրամասերի խաղաղ ժամանակի շարքեր ստեղծելու համար ենթադրւում է կազմակերպել քրդական ձիաւոր դունդ և մի հրացանաձիգ դումարտակ, որը պատերազմի ժամանակ կը վերածւի 4 դումարտակի: